

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N ----- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ  
14-Ի N 736-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի «Հայկ Սարիբեկյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» N 736-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Հայկ Սուրենի Սարիբեկյանին (ծնված 1993թ. հուլիսի 30-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբ., շ. 12ա, 2017 թվականին ընդունվել է Քեմբրիջի համալսարանի ասպիրանտուրա՝ համակարգչային գիտություն և տեխնոլոգիաներ մասնագիտությամբ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի ձմեռային զորակոչ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գրավի պայմանագրի նոտարական վավերացման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ գրավի իրավունքի պետական գրանցման պահից, որի համաձայն Հայկ Սարիբեկյանը պարտավորվում է ուսումն ավարտելուց հետո վերադառնալ Հայաստանի Հանրապետություն և 2 տարի աշխատել իր մասնագիտությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության միջնորդությամբ՝ նրա կողմից առաջարկվող վայրում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### **1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Հայկ Սուրենի Սարիբեկյանը (ծնված 1993թ. հուլիսի 30-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբ., շ. 12ա) 2016 թվականից սովորում է ԱՄՆ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի մագիստրատուրայում՝ էլեկտրատեխնիկա և համակարգչային գիտություն մասնագիտությամբ, որտեղ սովորելու էր մինչև 2018 թվականի փետրվար ամիսը: ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշման համապատասխան, ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի N 736-Ա որոշմամբ Հայկ Սարիբեկյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրվել է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտը՝ 2018 թվականի ամառային զորակոչը:

Նախատեսված ժամկետից շուտ ավարտելով մագիստրոսական ծրագիրը՝ Հ. Սարիբեկյանը 2017 թվականին ընդունվել է Քեմբրիջի համալսարանի ասպիրանտուրա:

### **2. Անհրաժեշտությունը**

Հաշվի առնելով, որ Քեմբրիջի համալսարանը 2017 թվականին ընդգրկվել է «Լոյս» հիմնադրամի կողմից նախատեսված օտարերկրյա տասը լավագույն բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատությունների ցանկում, ինչպես նաև Հ. Սարիբեկյանի բացառիկ ունակությունների դրսևորումը համակարգչային գիտությունների բնագավառում՝ նպատակահարմար է նրան պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրված տարկետման ժամկետը երկարաձգել մինչև ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի ձմեռային զորակոչը:

### **3. Ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունումը Հ. Սարիբեկյանին թույլ կտա ավարտելու հետբուհական կրթությունը, որից հետո նա կկարողանա ստացած գիտելիքները ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի N 736-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ օրենքներում և այլ իրավական ակտերում փոփոխություններ չի առաջացնի:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի N 736-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 14-ի N 736-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների մասին

<b>Նախարարության անվանումը</b>	<b>Դիտողություններ և առաջարկություններ</b>	<b>Նշումներ կատարման վերաբերյալ</b>
ՀՀ պաշտպանության նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չկան:	
ՀՀ արդարադատության նախարարություն	Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթին, ինչպես նաև	Կատարված է:

	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշմանը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ և 43-րդ հոդվածների պահանջների:</p>	
<p>ՀՀ Նախագահի աշխատակազմ</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>	